«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «Գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի համեմատական

աշխարհագրական վերլուծության իրականացումը միջին դպրոցում»

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն
ՀԵՂԻՆԱԿ Արաքսի Ղարիբյան
ՄԱՐԶ Արագածոտնի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գեղադիրի Ռ. Խաչատրյանի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------4

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ ՈՒ ՀՆԱՐՆԵՐ----------6

ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՄՆ-ի, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ----------7

ՏԱՐԱԾՔ----------8

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ----------9

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ----------10

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԵԺԻՄ----------12

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ----------14

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ----------16

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ----------18

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ----------20

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ, ԱՌԱՋԱՏԱՐ ՃՅՈՒՂԵՐ ----------26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------31

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատությունը մանրամասն համալիր աշխարհագրական վերլուծություն է աշխարհի գերտերությունների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Չինաստանի վերաբերյալ:

Արդի աշխարհում գրեթե բոլոր պետությունները քաղաքականապես ինտեգրված են որևէ աշխարհաքաղաքական համակարգում կամ գտնվում են որևէ գերտերության ազդեցության ոլորտում: Որևէ երկրի որևէ աշխարհաքաղաքական համակարգում կամ որևէ գերտերության ազդեցության ոլորտում գտնվելը պայմանավորված է.

- Ø տվյալ երկրի աշխարհագրական դիրքով, քաղաքաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական դիրքերի առանձնահատկություններով,
- Ø տարածաշրջանում, որում գտնվում է տվյալ երկիրը, գերտերությունների շահերի և ուժերի հարաբերակցությամբ, տարածաշրջանի աշխարհագրական միջավայրով,
- Ø մարդկային գործոններով (ազգային, կրոնական կազմ, արտագաղթի տեմպեր և ուղղվածություն, ժողովրդի մտածելակերպ և այլն):

Մեր երկիրը՝ Հայաստանի Հանրապետությունը, լինելով փոքր երկիր՝ բնակչության թվով, տարածքով, տնտեսական հնարավորություններով, գտնվում է գերտերությունների ազդեցության ոլորտում և վերջիններիս շահերի բախման գոտում: Պայմանավորված մեր երկրի աշխարհագրական դիրքով, տարածաշրջանի քաղաքաաշխարհագրական առանձնահատկություններով, այնուամենայնիվ գերտերություններից մեկի ազդեցության գերակշռությունը երբեմն ընդգծվում է տարբեր իրավիճակներում և միջազգային հարաբերություններում:

Սույն համեմատական-վերլուծական աշխատանքի արդյունքում, երբ բացահայտած կլինենք գերտերությունների աշխարհագրական համալիր նկարագիրը, եզրահանգում կանենք այն մասին, թե Հայաստանի վրա միջազգային աշխարհաքաղաքական համակարգում գերտերություններից որի ազդեցությունն է ավելի մեծ:

Աշխատանքը արդիական է, քանի որ արդի աշխարհում տեղի են ունենում աշխարհաքաղաքական վերադասավորումներ, իսկ մեր տարածաշրջանում դա տեղի է ունենում ավելի ինտենսիվ կերպով, և ակնհայտ է, որ այդ վերադասավորումների ազդեցությունը մեր պետության վրա ուղղակիորեն պայմանավորված է գերտերությունների՝ մեր երկրի հետ ունեցած հարաբերություններով, և մեր տարածքում նրանց հետապնդած շահերով:

Գերտերությունների աշխարհագրական համեմատական վերլուծության արդյունքում կատարելու ենք եզրահանգում այն մասին, թե ինչու է տարբեր գործոններով պայմանավորված Հայաստանը գտնվում գերտերություններից ավելի շատ մեկի ազդեցության ոլորտում և դա ինչպես կանդրադառնա աշխարհում սկիզբ առած վերադասավորումների գործընթացում մեր պետության կարգավիճակի և զարգացման վրա:

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ ՈՒ ՀՆԱՐՆԵՐ

Սույն նյութը միջին դպրոցում, մասնավորապես՝ 8-րդ դասարանում դասավանդելիս, նպատակահարմար է կիրառել խմբային ուսուցման մեթոդներ, քանի որ նյութի բովանդակությունը ծավալուն է և հնարավորություն է ընձեռնում այն բաժանել որոշակի հատվածների և նախապես կազմավորածած դասարանի աշակերտների ‹‹փորձագիտական›› խմբերին հանձնարարել իրենց հատկացված հատվածները ուսումնասիրել և ներկայացնել մյուս խմբերին՝ պատմելու, գծագրերի, դիագրամների, աղյուսակների, քարտեզի, ցուցապաստառների միջոցով:
Օրինակ դասարանը բաժանվում է 4 ‹‹փորձագիտական›› խմբի:

Առաջին խմբին հանձնարարվում է ներկայացնել գերտերություններից յուրաքանչյուրի տարածքի, աշխարհագրական դիրքի, պետական կառավարման ձևի, վարչատարածքային կառուցվածքի, բնական պայմանների և ռեսուրսների առանձնահատկությունները:

Երկրորդ խմբին հանձնարարվում է ներկայացնել գերտերություններից յուրաքանչյուրի բնակչության թվի և կազմի, տեղաբաշխման, շարժընթացի,ժողովրդագրական քաղաքականության առանձնահատկությունները:

Երրորդ խմբին հանձնարարվում է ներկայացնել գերտերություններից յուրաքանչյուրի տնտեսության կառուցվածքի և զարգացման առանձնահատկությունները:

Չորրորդ խմբին հանձնարարվում է ներկայացնել եզրակացություն գերտերություններից յուրաքանչյուրի բացառիկության, միջազգային հարաբերություններում, համաշխարհային ռազմական, տնտեսական ոլորտներում նրանց ունեցած դերի և նրանցից յուրաքանչյուրի՝ միջազգային քաղաքական գործընթացներում Հայաստանի Հանրապետության վրա ունեցած ազդեցության վերաբերյալ:

ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՄՆ-ի, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ներկայումս աշխարհում ինտենսիվ կերպով ընթանում են աշխարհաքաղաքական գործընթացներ, ուժային ազդեցությունների գոտիների վերադասավորումներ և վերաբաժանումներ: Աշխարհաքաղաքական գորընթացներում ակտիվ դերակատարում ունեն գերտերությունները, մասնավորապես՝ ԱՄՆ-ն, ՌԴ-ն և Չինաստանը, որոնց կողմից իրականացվող արտաքին քաղաքականության մեջ զուգակցվում են տնտեսությունը և պրակտիկան, որում առավելագույն չափով հաշվի է առնվում աշխարհագրական գործոնը: Այսինքն՝ թե տվյալ երկրի աշխարհագրական դիրքը, մարդկային ներուժը, հաղորդակցության ուղիները, բնական ռեսուրսներն ու աշխարհագրական այլ գործոններ ինչ ազդեցություն են ունենում պետության արտաքին քաղաքականության և միջպետական ու միջազգային հարաբերությունների վրա:

Սույն աշխատությունը մանրամասն համալիր աշխարհագրական վերլուծություն է աշխարհի գերտերությունների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Չինաստանի վերաբերյալ, որը ներկայացվում է հետևյալ սխեմայով.

- տարածք
- աշխարհագրական դիրք
- պետական կառավարման կարգ
- պետական կառավարման ռեժիմ
- պետական կառուցվածք, վարչատարածքային կառուցվածք
- բնական պայմաններ
- բնական ռեսուրսներ
- բնակչությունը
- տնտեսության ընդհանուր բնութագիր, առաջատար ճյուղեր
- եզրակացություն

ՏԱՐԱԾՔ

Պետության անվանումը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ռուսաստանի Դաշնություն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Տարածքի մակերեսը	9,4 մլն կմ^2	17,1 մլն կմ^2	9,6 մլն կմ^2

Ընդհանրապես որքան մեծ է որևէ պետության տարածքը, այնքան մեծ է դրա բնառեսուրսային ներուժը: Ինչպես երևում է վերը պատկերված երկրների տարածքների մակերեսների վերաբերյալ աղյուսակից, դրանց բնառեսուրսային ներուժը բավականին մեծ է: Վերջիններս մտնում են աշխարհի գերխոշոր երկրների առաջին տասնյակում: Եթե համեմատենք, ապա ստացվում է, որ այս երեք երկրները միասին կազմում են աշխարհի ցամաքի մոտ ¼ - ը, հետևաբար աշխարհի բնառեսուրսային պոտենցիալի ¼-ը գտնվում է այս գերտերությունների տարածքում: Սա շատ հզոր հիմք է տնտեսական մեծ առաջընթացի հասնելու համար, ինչը արդեն իսկ գրանցել են ԱՄՆ-ն ու Չինաստանը: Իսկ ՌԴ-ն ունի տնտեսական զարգացման հզոր ներուժ:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ

Աշխարհագրական դիրքը կարևոր է ցանկացած երկրի զարգացման համար: Այն յուրահատուկ ու հարափոփոխ գործոն է, որը կարող է նպաստել երկրի զարգացմանը, կամ՝ խոչընդոտել:

ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի ֆիզիկաաշխարհագրական դիրքերը ունեն մեկ ընդհանրություն. 3-ն էլ ունեն ելք դեպի ծով: ԱՄՆ-ի ու ՌԴ-ի ֆիզիկաաշխարհագրական դիրքերի նմանությունն էլ այն է, որ 2-ն էլ ունեն ելք միաժամանակ դեպի երեք օվկիանոսներ՝ Հյուսիսային սառուցյալ, Ատլանտյան, Խաղաղ:

Չինաստանն ունի ելք միայն Խաղաղ օվկիանոս:

Երեք երկրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքը նույնպես նպաստավոր է, քանզի 1000-ավոր կմ ափագիծ ունենալը տալիս է մեծ առավելություններ. ծովային ռեսուրսներից օգտվելու ու տնտեսական գործակցության լայն հնարավորություններ:

Քաղաքաաշխարհագրական դիրքը ոչ բոլորինն է նպաստավոր, քանզի վերոնշյալ երկրներից միայն ԱՄՆ-ն է, որ այժմ չունի վիճելի տարածքներ իր անմիջական հարևան երկրների հետ և հեռու է տարածաշրջանային և տեղային հակամարտությունների թեժ օջախներից, ինչն ԱՄՆ-ին զերծ է պահում նմանատիպ հակամարտությունների բացասական ազդեցություններից:

Այնուամենայնիվ 3 գերտերություններն էլ, անկախ իրենց աշխարհագրական կորդինատներից, աշխարհի տարբեր տարածաշրջաններում ունեն գերակա շահեր, և իրենց տնտեսական ու քաղաքական ներուժի շնորհիվ էական ազդեցություն ունեն ամբողջ աշխարհում և առանձին տարածաշրջաններում:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Պետության անվանումը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ռուսաստանի Դաշնություն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Պետական կառավարման կարգը	նախագահական հանրապետություն	նախագահական հանրապետություն	նախագահական հանրապետություն

Պետական կառավարման կարգը պետության կառավարման ձևն է և կառավարման համակարգի (իշխանության)կառուցվածքը: Ինչպես երևում է աղյուսակից, երեք պետություններն էլ նախագահական հանրապետություններ են՝ որոշակի առանձնահատկություններով:

ԱՄՆ-ն աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվել է 1776թ. , երբ անգլիական 13 գաղութները, միավորվելով Անգլիայի դեմ, զինված պայքարի միջոցով հասան անկախության:

Անգլիան ԱՄՆ-ի անկախությունը ճանաչեց 1783 թ. :

Պետության ու կառավարության ղեկավարը և զինված ուժերի գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է:

Օրենսդրական բարձրագույն մարմինը Կոնգրեսն է: Դաշնային բոլոր պետությունների նմանությամբ, ԱՄՆ-ում ևս, խորհրդարանը՝ Կոնգրեսը, բաղկացած է 2 պալատից: ԱՄՆ-ում դրանք կոչվում են **Սենատ** և **Ներկայացուցիչների պալատ:**

ՌԴ-ում պետության առաջնորդը նախագահն է: Պետական իշխանությունը տարանջատված է 3 թևի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների: Օրենսդիր մարմինը երկպալատ խորհրդարանն է՝ Պետական Դուման, գործադիր մարմինը կառավարությունն է, որի ղեկավարը վարչապետն է, որին խորհրդարանական ուժերի մեծամասնության ներկայացմամբ նշանակում է նախագահը, կառավարությունը նույնպես կազմվում է խորհրդարանական մեծամասնություն կազմող ուժի կողմից:

Չինաստանի առաջնորդը երկրի նախագահն է, որը միևնույն ժամանակ Չինաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղարն է և Չինաստանի կենտրոնական ռազմական խորհրդի նախագահը: Նա հանդես է գալիս Չինաստանի ազգային կոնգրեսի անունից:

Կառավարության գլխավորը հանդիսանում է վարչապետը՝ Ազգային խորհրդի նախագահը: Կառավարությունը կազմված է չորս փոխվարչապետներից և նախարարությունների ու հանձնաժողովների նախարարներից:

Նախագահական հանրապետություններում ընդհանրապես երկրի առաջնորդը համարվում է երկրի նախագահը, ով նաև հանդիսանում է երկրի անվտանգության, պաշտպանության և տարածքային ամբողջականության թիվ մեկ պատասխանատուն:

Իսկ նախագահն ընտրվում է անմիջապես քաղաքացիների կողմից ուղղակի քվեարկությամբ:

ԱՄՆ-ն, քանի որ իրական ժողովրդավարական կառավարման համակարգ ունի, այդ պատճառով իշանության տարանջատման սկզբունքը գործում է և իշխանության 3 ճյուղերը՝ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները, լիարժեքորեն իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունները՝ այդպիսով հավասարակշռելով և հակաշռելով իշխանական 3 ճյուղերի փոխադարձ վերահսկման մեխանիզմները օրենքով սահմանված կարգով:

ՌԴ-ն քանի որ ունի ավտորիտար կառավարման համակարգ, այդ պատճառով իշխանության տարանջատման մեխանիզմը շատ դեպքերում կրում է ձևական բնույթ և կարևորագույն հարցերը որոշվում են միանձնյա՝ երկրի նախագահի կողմից:

Չինաստանն ունի կառավարան տոտալիտար համակարգ, և բոլոր որոշումները կայացվում են երկրի միակ կառավարող քաղաքական ուժի՝ կոմունիստական կուսակցության կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԵԺԻՄ

Պետության անվանումը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ռուսաստանի Դաշնություն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Պետական կառավարման ռեժիմը	դեմոկրատիա	ավտորիտարիզմ	տոտալիտարիզմ

Պետական կառավարման ռեժիմը շատ կարևոր է պետության զարգացման համար, Ավտորիտար ու տոտալիտար կառավարման ռեժիմները երբեմն խոչընդոտում են պետության տնտեսության զարգացմանը, քանի որ սահմանափակում են տնտեսական գործունեության ազատությունը, անհավասար պայմաններ են ստեղծում տնտեսվարող կողմերի միջև, իսկ տնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդարական դաշտը կամ լինում է անկատար կամ չի գործում:

Դեմոկրատական (ժողովրդավարական) ռեժիմը էականորեն նպաստում է և՛ տվյալ երկրի ազգաբնակչության իրավունքների,ազատությունների գերակայության հաստատմանն ու սոցիալական լիակատար պաշտպանությանը, և՛ երկրի տնտեսության ինտենսիվ զարգացմանը:

ԱՄՆ-ում, քանի որ կառավարման դեմոկրատական ռեժիմ է հաստատված, իդեալական պայմաններ են առկա տնտեսության զարգացման համար, օրենսդրական համակարգը իրական իրավական հիմքերն է ապահովում տնտեսվարողների համար, վերջիններիս իրավունքները լիարժեքորեն պաշտպանված են պետության կողմից:

ՌԴ-ում պետական կառավարման ավտորիտար ռեժիմը չի նպաստում տնտեսության բնականոն և արագ զարգացանը, տնտեսվարողների համար հավասար պայմաններն ապահովված չեն, նրանց իրավունքները լիարժեք պաշտպանված չեն պետության կողմից, տնտեսվարող առանձին սուբյեկտեր ունեն գերիշխող և մոնոպոլ կարգավիճակ:

Չինաստանում կառավարման տոտալիտար՝ միակուսակցական համակարգ է, միակ իշխանական ուժը Չինաստանի կոմունիստական կուսակցությունն է, որը ձևավորում է օրենսդիր մարմինը՝ Չինաստանի ազգային կոնգրեսը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Պետության անվանումը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ռուսաստանի Դաշնություն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Պետական կառուցվածքը	դաշնային	դաշնային	դաշնային

Պետական դաշնային կառուցվածք ունեցող երկրների վարչատարածքային կառուցվածքը տարբերվում է միասնական (ունիտար) կառուցվածք ունեցող երկրների վարչատարածքային կառուցվածքից: Դաշնային երկրներում վարչատարածքային գլխավոր միավորներն ունեն ինքնավարության որոշակի աստիճան և առանձնահատուկ կարգավիճակ, այդ միավորների ղեկավարներին ընտրում են տվյալ միավորի բնակիչները, իսկ միասնականի դեպքում՝ պետական իշխանությունը կենտրոնաձիգ է, վարչատարածքային միավորներն առանձնահատուկ կարգավիճակ չունեն, ղեկավարը նշանակվում է կառավարության կողմից:

Եվ՛ ԱՄՆ-ը, և ՌԴ-ը, և՛ ըստ էության նաև ՉԺՀ-ը դաշնային հանրապետություններ են, որոնք բաղկացած են ինքնավարության որոշակի աստիճան ունեցող վարչատարածքային միավորներից:

ԱՄՆ-ն բաղկացած է **50 նահանգից և 1 դաշնային օկրուգից**: Դա Կոլումբիա օկրուգն է, որտեղ գտնվում է պետության մայրաքաղաք **Վաշինգտոնը:** ԱՄՆ-ի նահանգներն օժտված են լայն ինքնավարությամբ: Յուրաքանչյուր նահանգ ունի իր Սահմանադրությունը, օրենսդիր ու գործադիր մարմինները:

ՌԴ –ի **վարչատարածքային կառուցվածքը** բարդ է: Դա պատմական տևական գործընթացների արդյունքն է: ՌԴ-ի կազմում կան թե՛ քաղաքական-տարածքային, թե՛ վարչատարածքային միավորներ: ՌԴ-ի՝ որպես դաշնային հանրապետության քաղաքական-տարածքային միավորները առանձնացված են ազգային (էթնիկ) սկզբունքով: Դրանք, երկրի Սահմանադրությամբ, ինքնավարություն ունեցող պետական տարածքային միավորներ են: Այդպիսի քաղաքական ինքնավարություն ունեցող տարածքային միավորները կոչվում են **հանրապետություններ**: Որպես քաղաքական-տարածքային միավոր՝ հանրապետությունն ունի սեփական կառավարություն, խորհրդարան, սահմանադրություն, պետական-ազգային խորհրդանիշներ (դրոշ, զինանշան, օրհներգ):**Երկրամասը**, որպես վարչատարածքային միավոր, նախկինում ներառում էր քաղաքական, որոշակի ինքնուրույնություն ունեցող ինքնավար մարզեր: Ներկայումս դրանցից պահպանվել է միայն մեկը՝ Խաբարովսկի երկրամասի Հրեական ինքնավար մարզը: Իսկ 2007 թվականից հետո ձևավորված Պերմի, Կրասնոյարսկի, Կամչատկայի, Անդրբայկալի երկրամասերը իրենց կազմում ներառում են ինքնավար ազգային օկրուգներ:Ներկայումս Ռուսաստանի կազմում կան 22 հանրապետություն, 1 ինքնավար մարզ, 4 ինքնավար օկրուգ, 9 երկրամաս և 46 մարզ՝ ընդհանուր 82 միավոր:Չինաստանը բաղկացած է 22 գավառներից, 5 ինքնավար շրջաններից, 4 ուղիղ-ղեկավարվող քաղաքներից (Պեկին, Տյանցզին, Շանհայ և Չունցին), երկու գրեթե ինքնավար քաղաքներից (Հոնկոնգ և Մակաո) և իր սուվերենությունը պնդող Թայվանից (Չինաստանի վարչատարածքային կառուցվածքի վերաբերյալ տվյալները վերցված են https://hy.wikipedia.org/wiki/%D5%89%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6 ինտերնետային կայքից. հղումը հասանելի է 25. 11. 2021թ.
):

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բնական պայմանները մարդու շրջակա միջավայրի բնական հանգամանքների ամբողջությունն են, որոնք նպաստում կամ խոչընդոտում են տնտեսական գործունեության կազմակերպմանը:

ԱՄՆ-ի բնական պայմանները բազմազան են: Տարածքի մեծ մասը գտնվում է բարեխառն ու մերձարևադարձային գոտիներում, Ֆլորիդա թերակղզու հարավը՝ արևադարձային, իսկ Ալյասկան՝ մերձարկտիկական ու արկտիկական գոտիներում: Հատկապես արևելյան խոնավ շրջաններում շատ են գետերն ու լճերը: Խոշորագույն գետը Միսիսիպին է, որի ավազանում է ԱՄՆ-ի տարածքի մոտ կեսը, ունի նաև տրանսպորտային նշանակություն: Խոշոր են նաև Կոլորադո և Ռիո-Գրանդե գետերը: Շատ կարևոր է Մեծ լճերի տնտեսական, հատկապես տրանսպորտային նշանակությունը: Մակերևույթը նույնպես շատ բազմազան է. հիմնականում մեծ տարածք են զբաղեցնում հարթավայրերը՝ Կենտրոնական ու Մեծ, իսկ արևմուտքում ձգվում է Կորդիլիերյան լեռնաշղթան:

ՌԴ-ն բնական պայմանների բազմազանությամբ առաջինն է: Հատկապես մակերևույթը շատ է տարբերվում այլ երկրների մակերևույթից: Իրենց մեծությամբ առանձնանում են Արևելաեվրոպական կամ Ռուսական հարթավայրը, Արևմտասիբիրական դաշտավայրը, Մերձկասպյան ցածրավայրը, Միջինսիբիրական սարահարթը, տարբեր բարձրության խոշոր լեռնաշղթաները, ընդարձակ բարձրավանդակները և այլն: Մակերեսով տիրապետողը հարթավայրերն են: Լեռները տարածվում են արևմտյան ու հարավային շրջաններում:

Կլիման նույնպես բազմազան է, որը պայմանավորված է տարածքի մեծությամբ, աշխարհագրական դիրքով, մակերևույթի առանձնահատկություններով: Հյուսիսային գոտում բազմամյա սառածության շրջաններ են և գրավում են ՌԴ տարածքի կեսից ավելին:

Գետնի բազմամյա սառածությունը դժվարություններ է հարուցում տարածքի տնտեսական յուրացման և հատկապես գյուղատնտեսական ու շինարարական աշխատանքների համար:

Չինաստանի բնական պայմանները նույնպես խիստ բազմազան են: Արևելյան մասում Չինական մեծ հարթավայրն է, որը երկրի կենսական ու կարևորագույն նշանակության շրջանն է: Արևմտյան մասն առավելապես լեռնային ու սարահարթային է: Երկիրը մեծամասամբ կարելի է համարել լեռնային, քանի որ տարածքի ընդամենը 30%-ն ունի մինչև 1000 մ բացարձակ բարձրություն: Ամենաբարձրը Ցինհայն է կամ Տիբեթի լեռնաշխարհն է, որի միջին բացարձակ բարձրությունը 4500 մ է, որը երբեմն անվանում են «աշխարհի տանիք»: Այս երկրի կլիման բազմազան է, որը պայմանավորված է տարածքի մեծությամբ և օվկիանոսի ազդեցությամբ: Տարածքի մեծ մասը գտնվում է բարեխառն գոտում, հարավային մասը գտնվում է մերձարևադարձային և արևադարձային գոտիներում, իսկ հյուսիսային տարածքները գտնվում են ցուրտ կլիմայական գոտում:

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Պետության անվանումը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Ռուսաստանի Դաշնություն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
Բնական ռեսուրսները	Առկա են բազմատեսակ օգտակար հանածոներ: Հանքային քիմիական հումքի, ածխի, բնական գազի, նավթի երկաթի, ոսկու, կապարի, պղնձի, ցինկի, մոլիբդենի պաշարներով գտնվում է առաջին հնգյակում : Ընդերքի հարստություններն ամբողջությամբ բավարար նախադրյալ են ԱՄՆ-ի բազմաճյուղ արդյունաբերության զարգացման համար:	Առկա են քիմիական պարբերական համակարգի բոլոր հնարավոր տարրերը, հատկապես աչքի են ընկնումվառելիքային ռեսուրսները և մետաղները: Այստեղ է գտնվում պալադիումի և ուրանի համաշխարհային պաշարների մոտ 90 տոկոսը, բնական գազի, ածխի, երկաթի, անտառների քանակով կրկին առաջին տեղում է: Զգալի են ալմաստի, գունավոր, հազվագյուտ մետաղների, շին. և պարարտանյութերի արտադրության հումքի պաշարները: Քանի որ Եվրասիայում սպառվող բնական գազի հիմնական մատակարարը ՌԴ-ն է, այդ հանգամանքը դարձել է լուրջ գործիք ՌԴ-ի ձեռքին այս տարածաշրջանում աշխարհաքաղաքական հարաբերություններում սեփական շահերը առաջ մղելու համար:	Առկա են համարյա բոլոր հանքային ռեսուրսները, հատկապես աչքի են ընկնում գունավոր ու հազվագուտ մետաղների հանքերը: Վոլֆրամի, անագի, տիտանի պաշարներով այն գրավում է առաջին տեղը: Շատ են ածխի, նավթի պաշարները, իսկ ծարիրի պաշարների 75 տոկոսը պատկանում է նրան:

Բոլոր երեք երկրներն էլ ունեն գետերի ջրի էներգիայի, մակընթացության, քամու, արեգակնային, ընդերքի երկրաջերմային էներգիայի հսկայական պաշարներ, միլիոնավոր հեկտարներով հողեր ու անտառներ, ինչպես նաև հսկայական քանակով խմելու ջրի պաշարներ:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչությունը կարևոր դեր է խաղում ամեն մի պետության տարածքի յուրացման, տնտեսական զարգացման, երկրի պաշտպանության գործում: Մարդու գործունեության հետևանքով փոխվում են բնական համալիրներն ու դրանց առանձին բաղադրիչները: Բնաակչությունը երկրի գլխավոր արտադրողական ուժն է: Նրա դերը տնտեսության մեջ երկակի է. մի կողմից՝ նյութական բարիքների ստեղծողն է, իսկ մյուս կողմից՝ իր իսկ ստեղծած բարիքների սպառողը: Սակայն այստեղ կարևորը միայն բնակչության թիվը չէ, շատ կարևոր է նաև բնակչության կրթական մակարդակը, զբաղվածության աստիճանը, ինչպես նաև կարևոր են արժեհամակարգը, սեռատարիքային կազմը ևն:

Պետության անվանում	**Ամերիկայի Միացյալ Նահանգներ**	**Ռուսաստանի Դաշնություն**	**Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն**
Բնակչության թիվ	**329,5 մլն մարդ** **(2020 թ. տվյալ)**	**144,1 մլն մարդ** **(2020 թ. տվյալ)**	**1400 մլն մարդ** **(2020 թ. տվյալ)**

Այս տվյալները վերցված են Համաշխարհային բանկի հաշվետվությունից՝ wikipedia.org ինտերնետային կայքից՝

Соединённые Штаты Америки — Википедия (wikipedia.org)

Население России — Википедия (wikipedia.org)

Население Китая — Википедия (wikipedia.org)

(հղումները հասանելի են 25. 11. 2021թ.):

Բնակչության թվով այս երկրները գտնվում են աշխարհի գերխոշոր երկրների առաջին տասնյակում: Բնակչության թվով ԱՄՆ-ն աշխարհում 3-րդն է՝ Չինաստանից ու Հնդկաստանից հետո, իսկ ՌԴ-ն 9-րդն է:

Եթե համեմատենք 2001 թվականի տվյալների հետ, ապա կստացվի, որ միայն ՌԴ բնակչությունն է կրճատվել:

Զարգացած այլ երկրների համեմատությամբ՝ **ԱՄՆ-ի** բնակչությունն արագ է աճել (տարեկան 0,9 %), քանի որ ավելանում է ոչ միայն բնական վերարտադրության, այլև մեխանիկական աճի՝ ներգաղթի հաշվին: Մինչև 19-րդ դարի վերջերը ներգաղթողների մեջ գերակշռում էին անգլիացիները, շոտլանդացիները և իռլանդացիները: Այնուհետև զգալի թիվ կազմեցին եվրոպական այլ երկրներից, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Լատինական Ամերիկայից եկածները: Ամերիկյան ազգի ձևավորմանը մասնակցել

են նաև Աֆրիկայից բերված սևամորթները և ասիական երկրներից ներգաղթածները: Դա նշանակում է, որ ժամանակակից ամերիկյան ազգը ձևավորվել է բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնումից: Այժմ ներգաղթը կրճատված է, ժամանակակից բնակչության 90%-ից ավելին արդեն ԱՄՆ-ում ծնվածներն են: Բնական աճը դարձել է բնակչության թվի ավելացման հիմնական աղբյուր: ԱՄՆ-ում ապրում են 100-ից ավելի ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնք էթնիկ առումով բաժանվում են 3 խմբի՝ ա) ամերիկացիներ, որոնք ներգաղթածների սերունդներն են, բ) անցման շրջանի ներգաղթյալներ գ) բնիկներ (հնդկացիներ, էսկիմոսներ), որոնք կզմում են բնակչության 1 %-ից պակաս մասը: Սևամորթ ամերիկացիների (աֆրոամերիկացիներ), բաժինն ԱՄՆ-ի բնակչության մեջ 12 % է: Նախկինում սևամորթ բնակչության հիմնական մասն ապրում էր հարավում՝ այսպես կոչված՝ «սև գոտում»: Վերջին տարիներին սևամորթների կեսն արդեն վերաբնակվել էհյուսիսի և արևմուտքի խոշոր քաղաքներում: Սպիտակամորթները կազմում են ԱՄՆ-ի բնակչության 75%-ը: Վերջին տասնամյակներին բնակչության ընդհանուր թվում ավելացել է Արևելյան Ասիայից ու Լատինական Ամերիկայից ներգաղթյալների բաժինը: Իսպանախոս բնակչությունը ավելի արագ է աճում հարավային նահանգներում:

Հավատացյալ բնակչության հիմնական մասը կաթոլիկներ ու բողոքականներ են:

<u>Հայերն ԱՄՆ-ում</u>: ԱՄՆ-ում է գտնվում Ռուսաստանից հետո հայկական երկրորդ խոշոր համայնքը՝ գրեթե 1,2 մլն. հայ: Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել Օսմանյան Թուրքիայում 1890թ-ականներ հայկական կոտորածներից և 1915թ. Մեծ Եղեռնից հետո: Ներգաղթի նոր ալիք է սկսվել ՀՀ-ի անկախության հռչակումից հետո և շարունակվում է առ այսօր (Հայաստանից ու Մերձավոր Արևելքի երկրներից): Հայերի ամենահոծ զանգվածը բնակվում է Կալիֆոռնիա նահանգում՝ Լոս Անջելես քաղաքում և նրա մերձակայքում: Զգալի թվով հայեր են ապրում նաև Մասաչուսեթս , Միչիգան, Նյու Յորք և այլ նահանգներում: ԱՄՆ-ում գործում են 100-ից ավելի հայկական եկեղեցիներ,հրատարակվում են շուրջ 150 անուն թերթ ու պարբերական: ԱՄՆ-ի Դետրոյթ քաղաքում է գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական գրասենյակը: ԱՄՆ-ում են ապրել և ստեղծագործել աշխարհահռչակ գրող Վիլիամ Սարոյանը, հայտնի կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանը, գիտության և արվեստի այլ հայտնի գործիչներ:

ՌԴ-ում «ժողովրդագրական ճգնաժամ» է, այսինքն՝ ՌԴ-ի բնակչության բնական աճի ցուցանիշը բացասական է: Դրա վառ ապացույցն այն է, որ վերջին 2 տասնամյակում այնտեղ բնակչությունը կրճատվել է: Դա է պատճառը, որ ՌԴ-ն վերջին տարիներին վարում է ծնելիության խրախուսման պետական քաղաքականությունը (յուրաքանչյուր երեխայի համար ընտանիքին տրվող միանվագ դրամական նպաստները, բազմազավակ ընտանիքներին անհատույց բնակարանների հատկացումը և այլն), ինչը որոշակիորեն մեղմում է բնական աճի բացասական ցուցանիշները: Մեծ քանակությամբ ռուսներ են ՌԴ վերադառնում ԱՊՀ երկրներից: ԱՊՀ երկրների այլ ազգերի ներկայացուցիչներ ևս՝ ուզբեկներ, տաջիկներ, ադրբեջանցիներ, հայեր, որպես էժան աշխատուժ ներգաղում են ՌԴ: Մեծ թիվ են կազմում ԱՊՀ երկրներից բացի, այլ երկրներից ներգաղթող այլազգիները: Սակայն միևնույն ժամանակ ռուս երիտասարդ մասնագետները հեռանում են արևմտաեվրոպական և այլ զարգացած երկրներ: Երկրից հեռանում են նաև այլազգիները՝ գերմանացիները, հրեաները:

Էական փոփոխություններ է կրում բնակչության սեռատարիքային կազմը: Նոր ծնվածների թվի նվազումը հանգեցնում է բարձր տարիք ունեցողների բաժնի ավելացման՝ «բնակչության ծերացմամբ»: Ռուսաստանը աչքի է ընկնում նաև բնակիչների, հատկապես տղամարդկանց կյանքի ոչ բարձր միջին տևողությամբ (66 տարի): Դրա գլխավոր պատճառներն են բնակչության ոչ բարձր կենսամակարդակը և ալկոհոլի չափազանց շատ օգտագործումը:

Շատ խայտաբղետ է ՌԴ բնակչության ազգային կազմը: ՌԴ-ում այժմ ապրում են ավելի քան 100 ժողովուրդներ, որոնցից մեծաթիվ են ռուսները (81%), թաթարները, ուկրաինացիները, բաշկիրները, չուվաշները, չեչենները, հայերը: ՌԴ ժողովուրդների լեզուները պատկանում են 4 լեզվաընտանիքների՝ հնդեվրոպական, ալթայան, կովկասյան, ուրալյան: Բնակչության ճնշող մեծամասնությունը խոսում է հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներով:

ՌԴ-ն բազմակրոն պետություն է, սակայն գերակշռում են ուղղափառ քրիստոնյաները՝ ռուսներ, ուկրաինացիներ և այլք: Մեծ թիվ են կազմում մահմեդականները՝թաթարներ, չեչեններ, դաղստանցիներ և այլք: Բուդդայական (լամայական) ուղղություն են դավանում, կալմիկները, տուվացիները, բուրյաթները:

Բնակչության թվով **Չինաստանն** աշխարհի ամենամեծ երկիրն է, այս երկրում է ապրում աշխարհի բնակչությա գրեթե 1/5-ը, հետևաբար՝ բնակչության թիվը մանավանդ դրա աճի տեմպը բացառիկ մեծ և ուղղակի ազդեցություն ունեն Չինաստանի, ինչպես նաև ամբողջ աշխարհի տնտեսական ու սոցիալական զարգացման վրա:

Չինաստանում հազարամյակներ շարունակ ընդունված է եղել ընտանիքի ավանդական ու բազմազավակ մոդելը: Սակայն 1949թ-ին եկրում հաստատվեց սոցիալիստական կարգ, կառավարության մեծ ջանքերով նվազեց բնակչության մահացությունը: Բարձր ծնելիության պահպանման և մահացության նվազման շնորհիվ Չինաստանում բնակչությունն սկսեց շատ բարձր տեմպերով աճել: Դրա պատճառով էլ վարվեց ծնելիությունը սահմանափակող ժողովրդագրական քաղաքականություն՝ «Մեկ ընտանիք-մեկ երեխա» կարգախոսով, խախտողներին «պատժում էին» հարկերով, 2-րդ և հաջորդ երեխաների հաշվով ընտանիքին պարենամթերք չհատկացնելով: Ժողովրդագրական քաղաքականության արդյունքում 1970-ական թվականներից մինչև օրս բնակչության բնական աճը կրճատվել է շուրջ 7 անգամ՝ 2,8 %-ից իջնելով 0,4 %, որը զգալիորեն ցածր է աշխարհի բնակչության աճի միջին ցուցանիշից (1,1 %): Ուստի երկրի կառավարությունը 2012 թ. որոշում կայացրեց տրամաբանորեն հակառակ ուղղությամբ փոփոխել ժողովրդագրական նախկին քաղաքականությունը՝ խրախուսել ծնելիության չափազանց ցածրացած մակարդակի բարձրացումը:

Չինաստանը բազմազգ երկիր է, այստեղ ապրում են շուրջ 50 ազգություններ և ժողովուրդներ: Մեծամասնություն են կազմում չինացիները (ինքնանվանումը՝ հաներ)՝ 93%: Մեծաթիվ ազգերից են ույղուրները, մոնղոլները, տիբեթցիները, հուեյները, մյաոները, բուիները, կորեացիները, մանչժուրացիները, տուցզյաները և այլն: Գերակշռող կրոնը համարվում է կոնֆուցիականությունը, տարածված է նաև դաոսականությունը: Տիբեթում գերակշռում է բուդդայականության լամայական ուղղությունը: Այստեղ ապրում են նաև մահմեդականներ, բողոքականներ, կաթոլիկներ:

Չինաստանում աշխատանքային տարիքի անձանց թիվը կազմում է 800 մլն. մարդ, որից 1/5-ը երիտասարդներ են: Այս թվի կեսից ավելին տղամարդիկ են:

ԱՄՆ-ում բնակչությունը տեղաբաշխված է անհավասարաչափ: Միջին խտությունը կազմում է 33 մարդ/կմ^2, ինչը ցածր է՝ համեմատած շատ զարգացած երկրների հետ: Ամերիկացիների ավելի քան 4/5-ն ապրում է քաղաքներում: Շատ են խոշոր ու գերխոշոր քաղաքները: Հայտնի են Նյու Յորքը, Չիկագոն, Լոս Անջելեսը, Ֆիլադելֆիան, Դետրոյթը, Բոստոնը: Երկրի քաղաքաբնակների մեծ մասը կենտրոնացած է քաղաքային խոշոր ագլոմերացիաներում: ԱՄՆ-ում ձևավորվել են երեք մեգալոպոլիսներ՝ Մերձատլանյան կամ Բոսվաշ, Մերձլճային և Մերձխաղաղօվկիանոսյան: Դրանցից խոշորագույնը՝ Բոսվաշը, ձգվում է Ատլանտյան օվկիանոսի առափնյա երկայնքով՝ Բոստոնից մինչև Վաշինգտոն:

ԱՄՆ-ի քաղաքների շարքում առանձնանում է մայրաքաղաք Վաշինգտոնը, որը թե՛ բնկչության թվով, թե՛ տնտեսական հզորությամբ զիջում է երկրի խոշորագույն

քաղաքներին, բայց դրան հակառակ բացառիկ է նրա՝ աշխարհի հզորագույ տերության մայրաքաղաքի քաղաքական, մշակութային ու գիտական դերը:

ՌԴ-ի բնակչության տեղաբաշխումը խիստ անհավասարաչափ է: Բնակչության ավելի քան 80%-ը բնակվում է ավելի փոքր եվրոպական մասում, իսկ մոտ 20%-ը՝ ընդարձակ ասիական մասում: Բնակչության միջին խտությունը 9 մարդ/կմ^2 է, Սիբիրում այդ ցուցանիշը դառնում է 1, իսկ Մոսկվայի մոտակայքում՝ 330:

Քաղաքները ՌԴ-ում հիմնվել են վաղ ժամանակներից: Միջնադարում առավել խոշոր քաղաքները ստեղծվել են խոշոր գետերի ափերին ու առևտրական ուղիների երկայնքով: Դրանցից են Նովգորոդը, Սմոլենսկը, Մուրոմը: Հետագայում քաղաքներ ստեղծվել են Ռուսաստանին միացված նոր տարածքներում ու ծովափերին (Պետերբուրգը՝ Բալթիկ ծովի ափին, իսկ Վլադիվոստոկը՝ Ճապոնական ծովի ափին): Այդուհանդերձ անցյալ դարասկզբին ՌԴ բնակչության ճնշող մեծամասնությունը ապրել է գյուղերում: Խորհրդային տարիներին, արդյունաբերության արագ զարգացմանը զուգահեռ, կառուցվել են բազմաթիվ նոր քաղաքներ, կտրուկ աճել է հին քաղաքների բնակչության թիվը: Ներկայումս քաղաքներում բնակվում է Ռուսաստանի բնակչության ավելի քան 73%-ը, իսկ միլիոնանոց քաղաքների թիվը հասել 12-ի: Խոշոր քաղաքների շուրջը ձևավորվում են Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Սամարայի, Նիժնի Նովգորոդի, Եկատերինբուրգի, Սամարայի, Օմսկի ագլոմերացիաները: Իր առանձնահատկություններն ունի նաև գյուղական տարաբնակեցումը: Հյուսիսային գյուղերը շատ փոքր են, ցրված են հարյուրավոր կիլոմետրեր իրարից հեռու: Գյուղական տարաբնակեցման այդպիսի ձևը կոչում են ազարակային կամ խուտորային:

Չինաստանի բնակչությունը գլխավորապես բնակվում է գետերի ավազաններում: Ամբողջ 1,4 մլրդ-ը բնակվում է 4 գլխավոր գետերի ավազաններում: Վերջին տասնամյակներում բնակեցված ավանդական տարածաշրջաններից միլիոնավոր աշխատանքային միգրանտներ վերաբնակեցվում են նոր յուրացվող շրջաններում՝ հատկապես Սիցզյանի նավթարդյունաբերական, Ներքին Մոնղոլիայի ոռոգովի հողագործության ու հյուսիսարևելյան արդյունաբերական շրջաններում: Բնակչության թվի աճի հետ մեկտեղ աճում է նաև բնակչության միջին խտությունը: Եթե 1949թ. -ին բնակչության միջին խտությունը կազմում էր 56 մարդ/կմ^2, ապա ներկայումս՝ 140 մարդ/կմ^2: Սակայն քանի որ բնակչության 96%-ը բնակվում է տարածքի 40%-ի վրա, ուստի բնակչության խտության տարածական տարբերությունները մեծ են: Բնակչությա խտությունը այդ երկրի արևելյան դաշտավայրերում՝ աշխատատար գյուղատնտեսական արտադրության շրջաններում, տատանվում է 600-2200 մարդ/կմ^2- ի սահմաններում, իսկ Տիբեթում փոքր է՝ 10 մարդ/կմ^2: Չինաստանն ավանդաբար եղել է գյուղաբնակ երկիր: Մինչև վերջին տարիներս քաղաքներում էր բնակվում երկրի բնակչության երկրի բնակչության ընդամենը 1/3-ը, իսկ տնտեսական վերելքի հետևանքով այսօր քաղաքային բնակչությունը կազմում է երկրի բնակչության 52%-ը: Այդուհանդերձ՝ քաղաքային բնակչության բացարձակ թվով՝692 մլն մարդ, Չինաստանն աշխարհում գրավում է առաջին տեղը: Այժմ երկրում միլիոնանոց քաղաքների թիվն անցել է 160-ից: Կազմավորվել են մի քանի խոշոր քաղաքային ագլոմերացիաներ, որոնցից առավել խոշորներն են՝ Շանհայը, Չունցինը, Բեյջինը, Գուանչժոուն, Տյանինը և այլն:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ, ԱՌԱՋԱՏԱՐ ՃՅՈՒՂԵՐ

Դեռևս 19-րդ դարի վերջերին ԱՄՆ-ը, գերազանցելով Մեծ Բրիտանիային, դարձավ աշխարհի գլխավոր կենտրոնը: Ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 80%-ը: Երկիրը գտնվում է զարգացման հետարդյունաբերական փուլում: Ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի գրեթե 80%-ը, արդյունաբերությանը՝ 19,1%-ը, գյուղատնտեսությանը՝ 19,1%-ը: ԱՄՆ-ում հաստատված է կապիտալիստական (ազատ շուկայական) տնտեսական համակարգ:

ԱՄՆ-ի տնտեսական զարգացմանը նպաստել են.

- բարենպաստ աշխարհագրական դիրքը,
- հարուստ ու բազմատեսակ բնական ռեսուրսները,
- աշխատունակ բնակչության զանգվածային ներգաղթը,
- ազատ շուկայական տնտեսական հարաբերությունները:

ԱՄՆ-ն ներկայումս թե՛ տնտեսական և գիտատեխնիկական ներուժով, թե արտադրական ճյուղերի և սպասարկման ոլորտի ճյուղերի մակարդակով, թե՛ ռազմական հզորությամբ աշխարհում առաջինն է:

ԱՄՆ-ում է ստեղծվում համաշխարհային ՀՆԱ-ի 1/5-րդը:

Աշխարհի 500 խոշոր դրամատների 25%-ը ամերիկյան է: ԱՄՆ-ում շատ մեծ է արտադրական ու ֆինանսական միավորումների դերը: Երկրի 500 խոշոր ընկերություններ տալիս են արդյունաբերական ամբողջ արտադրանքի կեսից ավելին:

ԱՄՆ-ի ազգային արժույթը ամերիկյան դոլարն է, որն այս պահին ամբողջ աշխարհում ամենաշատ գործածվող արժույթն է: Արդյունաբերության առանձին ճյուղեր հաճախ պատկանում են 2-3 ընկերության: Այսպես՝ ավտոմոբիլային 3 խոշոր ընկերությունների՝ «Ջեներալ մոթորս»-ի, «Ֆորդ»-ի և «Քրայսլեր»-ի ձեռքում է կենտրոնացած ԱՄՆ-ի ավտոմեքենաների արտադրության 95%-ը:

ԱՄՆ-ի ազգային եկամտի կառուցվածքում արդյունաբերական արտադրանքի արժեքն ավելի քան 15 անգամ գերազանցում է գյուղատնտեսական արտադրանքի արժեքին: Զարգացած են արդյունաբերության բոլոր ճյուղերը, ընդ որում՝ մշակող ճյուղերի բաժինը կազմում է մոտ 80 %: Բարձր է ավտոմատացման և համակարգիչների կիրառման մակարդակը: Համաշխարհային տնտեսության մեջ մեծ է ԱՄՆ-ի բաժինը էլեկտրաէներգետիկայի, ավտոմոբիլաշինության, ավիահրթիռատիեզերական և էլեկտրոնային մեքենաշինության, նավթավերամշակման արդյունաբերության և այլ բնագավառներում:

ԱՄՆ-ի ագրոկլիմայական և հողային ռեսուրսները բարենպաստ բնական նախադրյալներ են բազմաճյուղ գյուղատնտեսության զարգացման համար: Տիրապետող են խոշոր ագարակները (ֆերմաները), որոնք վարում են ինտենսիվ արտադրություն և լայնորեն կիրառում են վարձու աշխատանքը: Դրանք մասնագիտանում են գյուղատնտեսական որոշակի մթերքների արտադրության մեջ: ԱՄՆ-ի գյուղատնտեսության արտադրանքի մեծ մասը (65%) տալիս է անասնապահությունը:

ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը լիովին բավարարում է բնակչության պարենի պահանջարկը, իսկ որոշ արտադրատեսակներ նաև զգալի քանակությամբ արտահանվում են:

ԱՄՆ-ն ունի զարգացած տրանսպորտայի ցանց: Այն ավելի խիտ է հյուսիսում և արևելքում, քան հարավում և արևմուտքում: Հեռավոր բեռնափոխադրումների մեջ առաջատարը երկաթուղին է, որի երկարությամբ ԱՄՆ-ն աշխարհում առաջինն է: Բեռների, ինչպես և ուղևորների փոխադրումները կարճ ու միջին տարածություններում գերազանցապես կատարվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Ավտոմեքենաների քանակով բեռնաշրջանառության և ավտոճանապարհների երկարությամբ (5.6 մլն կմ) նույնպես ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Արտաքին բեռնափոխադրումները գլխավորապես իրականացվում են ծովային տրանսպորտի միջոցով:

ՌԴ-ն աշխարհի հզոր տնտեսություն ունեցող խոշորագույն պետություններից է: ՌԴ տնտեսությունը պատմականորեն զարգացել է նրա տարածքի ընդարձակման և դրանցում առկա բնական, առաջին հերթին՝ հողային ռեսուրսների յուրացմանը զուգընթաց:

20-րդ դարի վերջին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նրա կազմում գտնվող հանրապետությունները, այդ թվում նաև ՌԴ-ն, հայտնվեցին տնտեսական ծանր վիճակում:

ՌԴ բազմաճյուղ տնտեսության զարգացման համար կարևոր նախադրյալներից են՝

- բազմապիսի ու հարուստ բնական ռեսուրսների առկայությունը,
- համեմատաբար որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը, մանավանդ, որ վերջին տարիներին ազատ աշխատատեղերի 1/5-ը զբաղեցրել են հիմնականում ԱՊՀ-ից ու Չինաստանից ներգաղթածները,
- մեծածավալ կապիտալ շինարարությունն ու արդյունաբերության նոր ճյուղերի զարգացումը, որոնք ստեղծում են բազմապիսի արտադրանքի մեծ պահանջ:

ՌԴ ազգային արժույթը ռուբլին է, որի անունը դեռևս պահպանվել է ԽՍՀՄ ժամանակներից:

ՌԴ արտադրական ոլորտի առաջատար ճյուղն արդյունաբերությունն է՝ բաղկացած բազմաթիվ ճյուղերից ու ենթաճյուղերից: Դրանց թվում գլխավորներն են վառելիքաէներգետիկական, մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական, անտառարդյունաբերական համալիրները, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

ՌԴ տարածքի բնական պայմանների բազմազանությամբ պայմանավորված, բազմաճյուղ է նրա գյուղատնտեսությունը: Երկիրը լիովին ապահովված է գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցով՝ հողային ռեսուրսներով: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են հողային ֆոնդի ընդամենը 24 %-ը(403 մլն հա): Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է, որը տալիս է գյուղատնտեսական արտադրանքի կեսից ավելին: Անասնապահությունը զարգանում է հիմնականում արոտավայրերի ու բնական խոտհարքների և ցանովի կերախոտերի բազայի վրա:

ՌԴ-ի՝ որպես խոշորագույն ցամաքային ու ծովային պետության տնտեսության մեջ առանձնահատուկ տեղ է խաղում տրասպորտը: Երկրի հզոր տրանսպորտայի համակարգն ընդրկում է ժամանակակից տրանսպորտի բոլոր տեսակները՝ երկաթուղային, ավտոմոբիլային, ծովային, գետային, խողովակաշարային, օդային, էլեկտրական: ՌԴ-ն աշխարհի պետությունների շարքում առաջնակարգ տեղ է գրավում ճանապարհային ցանցի երկարությամբ, ինչպես նաև բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ցուցանիշներով:

Պատմական նոր և նորագույն ժամանակաշրջաններում **Չինաստանում** տիրապետող ավատատիրական հարաբերությունները, ինչպես նաև այլ պետությունների կողմից ժամանակ առ ժամանակ երկրի որոշ մասերի զավթումը խոչընդոտել են Չինաստանի տնտեսության զարգացմանը: Այդ պատճառով Չինաստանը, թեպետ ուներ տնտեսական զարգացման համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները, 20-րդ դար մտավ որպես թույլ զարգացած գյուղատնտեսական երկիր: Չինաստանի տնտեսական զարգացման փուլն սկսվեց 1949թ. -ից հետո, երբ երկրում իրականացավ սոցիալիստական հեղափոխություն: Երկրի նոր կառավարությունը ձգտում էր ապահովել տնտեսական առաջընթաց և ժողովրդի բարեկեցության բարձրացում, սակայն այսպիսի խնդրի իրականացումը Չինաստանի նման մեծ ու արագ աճող բնակչություն ունեցող երկրում չափազանց դժվար էր: Ուստի երկրի տնտեսական աճն ապահովելու նպատակով Չինաստանի կառավարությունը 1979թ-ից հետևողականորեն իրագործում է տնտեսության արմատական բարեփոխման ծրագիր, որի շնորհիվ Չինաստանն արդեն դարձել է գերհզոր երկիր: Երկրում ստեղծվել են 4 հատուկ տնտեսական գոտիներ, 14 բաց քաղաքներ և բաց ծովափնյա գոտիներ, որտեղ գործարարների համար ապահովվում են տնտեսկան գործունեության բացառիկ նպաստավոր պայմաններ.

§ հաստատվում են սովորականից ցածր հարկեր,

§ հեշտացվում է արտահանման և ներկրման գործընթացը:

Էապես փոխվել են Արևելյան Չինաստանի տնտեսության պատկերն ու տեղաբաշխումը: Արևելյան Չինաստանն այսօր արդեն հիշեցնում է մի հատված ԱՄՆ-ից կամ Արևմտյան Եվրոպայի երկրներից: Հատուկ տնտեսական գոտիներն աճում են չափազանց արագ:

Այսպես օրինակ՝ Հոնկոնգի մոտ 20000 բնակիչ ունեցող Շենժեն գյուղում 1970-ական թվականների վերջին հիմնադրվեց երկրի հատուկ տնտեսական գոտիներից մեկը, որի նորակառույց ձեռնարկություններում Չինաստանի տարբեր մասերից այստեղ աշխատելու եկածների ու նրանց ընտանիքի անդամների թիվը 2000-ականներին անցնում էր 4 միլիոնից: Այսպիսով՝ շուրջ 30 տարում աճեց մի նոր քաղաք, որը բնակիչների թվով գերազանցեց մոտ երեքհազարամյա Հռոմին: ՀՆԱ-ի ծավալով Չինաստանն աշխարհում առաջին երկիրն է 2016 թվականի հունվարի մեկից:

Չինաստանի ազգային արժույթը յուանն է, որի ազդեցությունը գնալով մեծանում է միջազգային շուկայում:

ՉԺՀ-ի արդյունաբերությունը բազմաճյուղ է, արդյունաբերության հիմքը վառելիքաէներգետիկակական արդյունաբերությունն է: Զարգացած են նաև էլեկտրաէներգետիկան (էլեկտրաէներգիայի արտադրությա և սպառման ծավալով

Չինաստանն աշխարհում զբաղեցնում է 2-րդ տեղը ԱՄՆ-ից հետո), սև և գունավոր մետաղաձուլությունը, քիմիական,թեթև ու սննդի արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը Չինաստանի տնտեսության ավանդաբար զարգացած ճյուղն է, արտադրանքի ընդհանուր ծավալով Չինաստանի գյուղատնտեսությունն աշխարհում առաջինն է: Տնօրինելով աշխարհի հողերի 7 %-ը՝ գյուղատնտեսությունը ոչ միայն բավարարում է աշխարհի բնակչության մոտ 20 %-ի պահանջարկի մեծ մասը, այլև գյուղատնտեսական մթերքի որոշ քանակություն արտահանվում է: Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

Չինաստանն ունի հզոր տրանսպորտային համակարգ, որի առավել կարևոր ճյուղը երկաթուղայինն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գերտերությունների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-Ի, Չինաստանի, համեմատական աշխարհագրական վերլուծության արդյունքում կարող ենք եզզրակացություն անել այն մասին, որ.

- Երեք գերտերություններն էլ ունեն բազմաթիվ ընդհանրություններ. երեքն էլ տարածքի մեծությամբ, բնակչության թվով, բնառեսուրսային ներուժով, տնտեսական հզորությամբ աշխարհի առաջատար երկրներից են, երեքն էլ դաշնային պետություններ են, երեքն էլ բազմազգ, բազմակրոն երկրներ են:
- Աշխարհագրական դիրքի, մարդկային ներուժի, հաղորդակցության ուղիների, բնական հարուստ ռեսուրսների և աշխարհագրական այլ գործոնների, , պատմական զարգացման առանձնահատկությունների, արտաքին քաղաքականության և միջպետական ու միջազգային հարաբերությունների ոլորտում ցուցաբերած ակտիվության շնորհիվ և՛ ԱՄՆ-ը, և՛ ՌԴ-ը, և՛ Չինաստանը գերտերություններ են և ակտիվ ու վճռորոշ դերակատարում ունեն միջազգային աշխարհաքաղաքական գործընթացներում:
- Ռազմական, տնտեսական, քաղաքական առումով աշխարհի ամենահզոր տերությունն ԱՄՆ-ն է, որը միջազգային հարաբերություններում հատկապես ակտիվ և էական ազդեցություն ունի գլոբալ, ավելի ընդգրկուն հարցերի և գործընթացների վրա:
- Չինաստանը ամենամեծ տնտեսական պոտենցիալ և ամենաարագ զարգացող տերությունն է, և նրա ազդեցությունը միջազգային հարաբերություններում ավելի շատ տնտեսական ուղղվածություն ունի:
- ՌԴ-ն, ԱՄՆ-ի համեմատ ունենալով ավելի սահմանափակ տնտեսական հնարավորություններ և աշխարհում ավելի պակաս քաղաքական ազդեցություն, ավելի ակտիվ և ազդեցիկ դերակատարում ունի կոնկրետ այն տարածաշրջաններում, որոնք իր անմիջական կենսական շահերի գոտում են գտնվում, որոնց երկրների բնակիչների հետ պատմականորեն ձևավորված սերտ տնտեսական, սոցիալական և մշակութային կապեր ունի: Այդպիսի տարածաշրջաններց մեկն էլ Հարավային կովկասն է, թրթում գտնվում է Հայաստանի Հանրապետությունը, և, պայմանավորված աշխարհագրական դիրքով, պատմականորեն ձևավորված կապերով, միջազգային ռազմական, քաղաքական, տնտեսական հարաբերություններում ավելի շատ գտնվում ենք ՌԴ-ի ազդեցության ոլորտում, ուստի օրինաչափորեն ենթարկվում ենք այն հասարակական, տնտեսական և քաղաքական իրադրությանը, ինչպիսին ՌԴ-ում է:
- ՌԴ-ում ժողովրդավարության զարգացումը, տնտեսության արդիականացումը, սոցիալական վիճակի բարելավումը ինքնաբերաբար կհանգեցնի նաև Հայաստանի զարգացմանը և առաջընթացին նշված բնագավառներում և ընդհանրապես:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան

Աշխարհագրություն 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, Մանմար-2018

2. Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան

Աշխարհագրություն 8-րդ դասարանի դասագիրք, Երևան, Մանմար-2019

3. Թ. Վարդանյան, Մ. Մանասյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Ա. Պոտոսյան **Աշխարհագրություն 10-րդ դասարանի դասագիրք, Երևան, Զանգակ-2017**

4. Մ. Մանասյան,Ա. Հովսեփյան, Ա. Պոտոսյան

Աշխարհագրություն 12-րդ դասարանի դասագիրք, Երևան, Զանգակ-2018

5. А.С. Булатова. **Страны и регионы мира, Москва-2010**

6. В.П. Максаковски. **География-10-11 классы, Москва-2020**